

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԸՆԿԵՐԱԲԱՆ, ՍՓԻՒՌ-ՔԱԳԷՏ ԴՈԿՏ. ՀՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՀԵՏ

**Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան ընկերաբան, սփիւռքագէտ եւ համալսարանի դասախօս է: 12 տարի պաշտօնավարած է Օքսֆորտի համալսարանի Ասիական եւ Մերձավոր Արեւելքի ուսումնագիտական ամպիոնին մէջ, մինչ այդ՝ 10 տարի Քեմպրիջի համալսարանին մէջ: 2021 թուականէն ի վեր Փարիզի INALCO համալսարանի հայկական ամպիոնին մէջ դասախօս է: 2019-2022 թուականներուն ղեկավարած է Կիւլպէնկեան հիմնարկութեան «Հայկական Սփիւռքի Հարցախոյզ» մեծածաւալ ուսումնասիրական ծրագիրը: 2024-էն ի վեր Հայց. առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան թեմի «Հաստատութեանկան Գորարարութիւն» նախաձեռնութեան վարիչն է: Հրատարակած է բազմաթիւ ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, ինչպէս նաեւ հեղինակն է շարք մը մենագրութիւններու: Հարցազրոյցը կը պարզաբանէ Հաստատութեանկան Գորարարութեան ծրագիրը:**

«Նոր Յառաջ» – Ի՞նչ է եկեղեցւոյ դերակատարութիւնը Սփիւռքի մէջ՝ 21-րդ դարուն:

Հրաչ Զիլինկիրեան – Ընդհանրապէս մեր ազգային խօսույթին մէջ անընդհատ կը կրկնենք, որ եկեղեցին շատ կարեւոր դեր ունի ազգային կեանքին մէջ, ինքնութիւն, լեզու եւ մշակույթ պահած է: Եթէ արագ ակնարկ մը նետենք 19-րդ դարուն Պոլսոյ, մասնաւորաբար Մաղաքիա Օրմանեան պատրիարքի մտածողութեան՝ իր հեղինակած «Հայ Ազգութիւն» հրատարակութեան մէջ հայկական ինքնութեան համար ամէնէն կարեւորներն են եկեղեցին, լեզուն-մշակույթը, եւ դաստիարակութիւնը: Այս երեք սիւներն էին, որոնք ձեռով մը կը բնորոշէին ազգային կեանքը: Չմոռնանք որ ընդհանուր շրջագիծը Միլլէթ համակարգն էր, թէ մենք կրօնքի միջոցաւ սահմանուած ազգութիւն մըն էինք Օսմանեան կայսրութեան մէջ՝ ինչպէս միւս փոքրամասնութիւնները: Հիմա եթէ տեղափոխուինք 21-րդ դար, կը տեսնենք որ հսկայական փոխակերպումներ տեղի ունեցած են ոչ միայն քաղաքական, մշակութային եւ այլ բնագաւառներու մէջ, այլ նաեւ մեր ազգային կեանքին մէջ: Կը տեսնենք որ այսօր, ըստ մեր վերջին տարիներու ուսումնասիրութեան, հայկական ինքնութիւնը կը սահմանուի հիմնական երեք գործօններով, որոնց մէջ եկեղեցին չկայ. ընտանիքը, լեզուն եւ մշակույթը: Եկեղեցին այսօրուան Սփիւռքին մէջ ապրող հայուն համար առաջնահերթ դիրք չունի: Կը կարծեմ որ սա կարեւոր փոխակերպումներն են և որ տեղի ունեցած է անցնող 100-է աւելի տարիներուն ընթացքին, որ նոյնիսկ մեր ինքնահասկացութեան մէջ չենք վերլուծած այս փոփոխութիւններուն նշանակութիւնը մեր այսօրուան կեանքին մէջ:



Երկրորդ կարեւոր եւ հսկայական փոփոխութիւնը հայկական պետականութեան վերականգնումն էր, գոնէ 1991-էն ի վեր: Եթէ մինչ այդ՝ 600 տարի պետականութիւն չունէինք, եկեղեցին՝ իբր կառոյց, խաղաց ձեռով մը պետականութեան դերը հայ ժողովուրդի կեանքին՝ Օսմանեան կայսրութեան մէջ, ցարական Ռուսաստանի մէջ: Այստեղ նրբութիւն մը կայ որ պէտք է ընդգծուի. այո՛, եկեղեցին դարերով այդ դերը խաղցեր է հայ ժողովուրդի կեանքին մէջ, բայց նաեւ ձեռով մը պարտադրութիւն մը եղած է ասիկա պետութիւններու կողմէ: Այսինքն մինչեւ 19-րդ դար ամբողջ աշխարհի մէջ կրօնքը հիմնական դեր կը խաղար, գրեթէ բոլոր ժողովուրդներու կեանքին մէջ, հետեւաբար մենք եւս նոյն համակարգին մէջ ունեցած ենք նման դրսեւորում: Բայց 21-րդ դարուն երբ կը խօսինք մեր եկեղեցւոյ կամ ազգ. կառոյցներուն մասին, տակաւին 19-րդ եւ 20-րդ դարու կէսերու կաղապարին մէջ է որ կը տեսնենք կամ այդ շրջագիծի մէջ է որ կը փորձենք հասկնալ: Հոս է որ հասկացութեան բախումներուն զէմ-յանդիման կը գտնուինք: Հասարակութիւնը 21-րդ դար կ'ապրի, կառոյցները իրենք զիրենք կը դրսեւորեն նախկին հասկացութիւններով, հոս է որ կը գոյանայ բախումը: Կը կարծեմ որ այ-

սօրուան ընդհանուր պատկերը այս պատմական զարգացումներն են, որոնք պէտք է նկատի առնենք եթէ կ'ուզենք աւելի առաջ երթալ եւ հարցերը, որ ունինք, կարգաւորել աւելի դրական իմաստով, որովհետեւ եթէ պէտք է լուծումներ գտնենք, պէտք է մտածենք ինչ ազդեցութիւն կամ ներգործութիւն կրնան ունենալ այդ լուծումները: Այլապէս կարելի է շատ յայտարարութիւններ ընել, բայց վերջաւորութեան ոչինչ ստանալ:

«ՆՅ» – Հիմա եթէ ընդհանրապէս համաշխարհային վիճակը նկատի առնենք, կը տեսնենք որ կրօնքի վերադարձ մը կայ, աշակողմեան գաղափարախօսութիւնները ընդգծելիօրէն արդէն իսկ յառաջադասում արձանագրած են, նոյնիսկ Ժայռայեղ աջը, որուն մէջ նա՛ն կրօնական համոզումները, հաւատալիքները շատ մեծ դեր ունին: Առնենք Պարսկաստանը, Իսրայէլը, Լիբանանը, Ամերիկան, ուր հալոյթներ կարեւոր ներկայութիւն է, հոն ալ կրօնքը կարեւոր դեր ունի: Ուրեմն կրօնքը տեղ ունի եւ կարեւոր ազդակ մըն է այսօրուան հասարակութեան մէջ: Հալոյթներ չի կրնար այս ամբողջէն գերծ մնալ: Կրօնքի ներթափանցման ազդեցութեան նոր թափ մը ստեղծուած է ամէնուր: Այս բոլորին մէջ հայ առաքելական եկեղեցին եւ միւս յարանուանութիւնները ինչպէ՛ս կը տեղաւորուին եւ ինչպէ՛ս կը տեսնեն 21-րդ դարու Սփիւռքի մեր կազմակերպութեան մէջ իրենց դերակատարութիւնը:

Հ.Զ. – Կրօնք կայ եւ հաւատք կայ: Կրօնքը շատ անգամ կ'օգտագործուի որոշ գաղափարախօսութիւն մը առաջ տանելու կամ ազգայնական կարգախօսեր կամ փիլիսոփայութիւն մը առաջ տանելու: Կը տեսնենք որ, կրօնքի պարագային, օգտագործուած են քաղաքական կամ այլ միաւորներու կողմէ, որպէսզի տարածեն իրենց քաղաքական շահերը եւ այլն: Հոս պէտք է զգուշ ըլլանք, երբ կրօնք կ'ըսենք, պայման չէ որ եկեղեցւոյ մասին ըլլայ խօսքը: Կրօնքը ընդհանուր հասարակութեան կեանքին մէջ հիմնարկ մըն է:

«ՆՅ» – Փակագիծ մը բանամ ձեր այս ակնարկին հիման վրայ, ըսելով որ հայ առաքելական եկեղեցին եւս օգտագործուած է իբր քաղաքական միջոց տիրապետելու եւ կառավարելու հայ համայնքը: Մենք չէ, որ որոշած ենք այդպէս ըլլալ, այլ

մեզի պարտադրուած է այդ պարագան: Այսօրուան քաղաքական դրութիւնը նկատի ունենալով, կրօնքը եւ հայ եկեղեցին իբր կրօնական հաստատութիւն գիտակի՞ց է այս երեւոյթին եւ որքանո՞վ կրնայ շրջանցել կամ դուրս գալ կամ այնպիսի գործառնոյթներ կատարել որոնք բարոյական արժէքներու, փիլիսոփայական արժէքներու սահմանին մէջ կը գործեն եւ իսկական կազմակերպչական կարողութիւն մը կ'ունենան, որ հալոյթներ կարենայ Սփիւռքի մէջ իր տեղը գտնել եւ ընդհանուր զարգացման հոսանքներէն դուրս չմնալ:

Հ.Զ. – Առնենք 21-րդ դարու հայ Սփիւռքը: Որպէս երրորդ փոխակերպութիւն նշեմ որպէս շարունակութիւնը վերը նշուած երկուքին, Սփիւռքի արեւմտայնացումն է, այսինքն վերջին 50 տարուան ընթացքին Միջին Արեւելքի մեր համայնքներուն հոսքը դէպի Արեւմուտք՝ տարբեր պատճառներով: Եթէ այս իրականութիւնը նկատի առնենք մենք Միլլէթ համակարգի մէջ չենք ապրի ալիւս, մանաւանդ արեւմտեան երկիրներուն մէջ: Միջին Արեւելքի մէջ տակաւին այդ համակարգին մնացորդներ կան, որովհետեւ իսլամ երկիրներուն մէջ հայութիւնը կամ քրիստոնեաները տակաւին կ'ապրին որպէս կրօնական փոքրամասնութիւններ եւ պետութիւնը զիրենք կը տեսնէ իբր այդ: Բայց այսօր Սփիւռքի մեծամասնութիւնը կ'ապրի Արեւմուտքի մէջ: Այստեղ եկեղեցւոյ նուիրապետութեան վրայ որեւէ պարտաւորութիւն չէ դրուած, որ հայութիւնը ներկայացնէ այդ երկրի պետութեան մօտ կամ քաղաքական այդ գործառնոյթներուն մէջ մտնէ, որովհետեւ բաժնուած է եկեղեցի եւ պետութիւն: Ահաւասիկ մենք Սփիւռքի մէջ այսօր ունինք լրիւ ուրիշ պատկեր մը, իրականութիւն մը: Այսօր եկեղեցին որպէս բարոյականութիւն, որպէս հաւատք, որպէս քրիստոնէութիւն, որպէս արժեհամակարգ ի՞նչ պիտի փոխանցէ եւ ինչպէ՛ս պիտի փոխանցէ Սփիւռքի մէջ ապրող հայ մարդուն: Այս է ամենամեծ խնդիրը եւ մարդոց սպասումը:

Օրինակի համար՝ Հայաստանի մէջ անընդհատ կը խօսուի «ազգային արժեհամակարգի», «ազգային արժէքներու» մասին, բայց ես գրեթէ չեմ

լսած որո՞նք են այդ արժեքները: Կը խօսինք ընդհանուր վերացական ստորոգելիներու մասին, բայց չենք գիտեր որո՞նք են մեր ազգային փոխանցելի արժեքները: Գալով եկեղեցիին, եկեղեցին յատակ առաքելութիւն մը ունի, սկիզբէն ունեցած է յատակ հոգեւոր քրիստոնէական քարոզչական առաքելութիւն մը եւ այսօր դժուար է ըսել, թէ յատակ ի՞նչ է այդ առաքելութիւնը 21-րդ դարուն: Հոս է որ, իմ փորձառութեամբ եւ ուսումնասիրութեամբ, Սփիւռքի մէջ գոնէ մարդիկ կը սպասեն որ եկեղեցին այդ դերը խաղայ՝ արժեհամակարգը ձեւաւորելու, պահպանելու, կենսունակ պահելու դերին մէջ մնայ եւ ոչ թէ քաղաքական կամ աշխարհիկ դերերուն մէջ աւելի ծաւալ ունենայ իր աշխատանքներով:

«ՆՅ» – Ուրեմն, եթէ այսպէս նայինք հայ առաքելական եկեղեցոյ առաքելութեան, ի՞նչն է որ կը պակսի, պէտք է փոխուի, պէտք է բարեփոխուի: Նիւթ մըն է, որ հաւանաբար ձեր առաքելութեան մէջ կը մտնէ՝ Ամերիկայի արեւմտեան ափի Հաստատութեանկան Գորարարութեան ծիրէն ներս:

Հ.Զ. – Նախ կ'ուզեմ շեշտել Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանի ղեկավար դերը այս բոլոր նորարարական մօտեցումներու որդեգրման եւ նախաձեռնութեան ստեղծման մէջ: Հիմնական նպատակն է, ինչպէ՞ս քրիստոնէական հաւատքը եւ հայկական մշակոյթի ժառանգութիւնը կենսունակ դարձնել իւրաքանչիւր հայու առօրեայ կեանքին մէջ: Այսինքն այնպիսի ծրագրեր ստեղծենք, այնպիսի գործընթացներ սկսինք, որ հայ մարդու առօրեայ կեանքին մէջ հաւատքը եւ մշակոյթը ըլլան իրական ապրուած փորձառութիւններ: Անշուշտ ասոնք ի գործ դնելու համար քայլեր կան: Առաջինը՝ աշխատեցանք նախ սահմանել Արեւմտեան թեմի առաքելութիւնը, տեսիլքը եւ արժեքները (տե՛ս. յաջորդ էջը): Այսօր հանրայնօրէն կրնայ ամէն ոք տեսնել նշուած երեքը պատասխան վրայ, որպէսզի հասարակ ըմբռնում մը եւ հասկացութիւն մը ըլլայ ամբողջ թեմական գետնի վրայ, որ բոլորն ալ նոյն հասկացութեամբ եւ նոյն ուղղութեամբ սկսին աշխատել: Առաջին հերթին այս աշխատանքը տարուեցաւ, որ տեւեց շորս ամիս, նախնական գրաւոր սահմանումները պատրաստուեցան, ուղարկուեցան բոլոր համայնքներուն, որպէսզի կարգան, իրենց կարծիքը տան, փոփոխութիւններ առաջարկեն եւ այդ գործընթացի վերջաւորութեան ունեցանք վերջնական տարբերակը, որ այսօր արեւմտեան թեմի բոլոր եկեղեցուներու մուտքին մեծ պատաստներու վրայ ցուցադրուած է:

Երկրորդ կարեւոր կէտը կը վերաբերի ամբողջ թեմի ղեկավարութեան հետ սկսած նոր աշխատանքին. արեւմտեան թեմը ամենամեծն է թիւով, ունի աւելի քան 1.000 հոգի իր ղեկավար ցանցին մէջ, որոնք ամէնօրեայ դրութեամբ զանազան պաշտօններով, վարչային գործարքներով, այս կամ այն ձեւով ներգրաւուած են թեմական աշխատանքներուն մէջ: Կան աւելի քան 450 ծխական խորհուրդի անդամներ, 300-է աւելի սարկաւազներ, 200-է աւելի ուսուցիչ շաբաթօրեայ եւ կիրակնօրեայ դպրոցներու, մօտ 3.000 աշակերտ: Ուրեմն այդ Հաստատութեանկան նորարարութեան սկզբունքներէն մէկն է՝ ինչպէ՞ս կրնանք ներքին իմաստով այս նորարարութիւնը սկսիլ ղեկավար տարրէն, այն մարդոցմէ, որոնք շունչ կու տան, քայլերու կը ձեռնարկեն: Տարբեր ծրագրեր ունինք, կ'աշխատինք ղեկավարութեան հետ տարբեր շրջանակներու մէջ, իրենց վերաբերող նիւթեր, նոր գաղափարներ կ'արծարծենք, նոր ծրագրեր կը մշակենք:

Երրորդ՝ պիտի ստեղծուի նորարարական եւ մետիայի կեդրոն մը առաջնորդարանէն ներս: Այս կեդրոնին հիմնական նպատակն ու առաքելութիւնը բովանդակութիւն արտադրելն է: Վերջ ի վերջոյ եկեղեցին նաեւ բովանդակութեան մասին է. քարոզչութիւնը, Ս. գիրքի սերտողութիւնը, դաստիարակչական նիւթերը եւ այլն: Եթէ կ'ուզենք որ հաւատքն ու մշակոյթը կենսունակ մնան, պէտք է նաեւ բովանդակութիւնը տանք մարդուն, որպէսզի աւելի գիտակցուած եւ հարուստ գիտելիքներով ապրի իր հաւատքը եւ ազգային ինքնութիւնը:

«ՆՅ» – Երբ եկեղեցի կ'ըսենք, կեդրոնական դերակատարը հոգեւոր հովիւն է, որովհետեւ ինքն է միջնորդը համայնքի եւ Աստուծոյ: Բնականաբար հոգեւոր հովիւին պատրաստութիւնը շատ կարեւոր դեր ունի այս բոլորին մէջ: Արդեօք այսօր հոգեւոր հովիւ մը, որ Էջմիածնի մէջ կը պատրաստուի եւ հայաստանեան մթնոլորտի մէջ կը մեծնայ, որքանով կրնայ նկատուի ունենալ սփիւռքեան ազդակը, որքանով տեղեակ է սփիւռքեան ամբողջ իրավիճակին ու հոգեբանութեան, լեզուին, պետութեան օրէնքներուն, հոգեւոր արժեքներու իմացութեան տուեալ համայնքի մը, ուր պիտի ուղեւորուի ծառայելու:

Հ.Զ. – Երկու հիմնական կէտ կայ այս հարցին մէջ: Առաջինը՝ նախ պէտք է ըսենք որ հոգեւորականութեան կամ հոգեւոր կոչում ունեցողներուն թիւը անցնող տասնամեակներուն նուազած է ընդհանրապէս: Սա միայն հայ եկեղեցոյ յատուկ չէ: Աշխարհիկացման գործընթացին հետեւանքն է անցնող 50-60 տարուան ընթացքին: Որպէս հայութիւն մեզի համար այս հարց է այս մէկը: Գալով հոգեւորականներու պատրաստութեան հարցին, հոն ուրիշ մեծ հարց մը կայ: Կը տեսնենք որ Սփիւռքը հոգեւորականներ չ'արտադրեր: Այսօր եթէ նայինք, ներկայ հոգեւորականներու գրեթէ 90 տոկոսը Հայաստան ծնած աշակերտներ են, ճեմարանականներ, որոնք հոգեւորական կը դառնան: Այս մասին յօդուած մը ունիմ մօտ 15 տարի առաջ գրուած, թէ Սփիւռքի այս իրողութիւնը մեծ խնդիր է երկարաժամ-



կէտ նայելով եկեղեցոյ եւ համայնքներու կեանքին: Այսինքն եթէ անընդհատ դուրսէն պիտի գան հոգեւորականները, նոր սերունդին հետ առնչութիւն պիտի չունենան ընդհանրապէս, լեզուին կամ մշակոյթին ծանօթ պիտի չըլլան: Եթէ տուեալ երկրին լեզուն չեն գիտեր, երիտասարդներուն հետ հաղորդակցութիւն չեն ունենար, որովհետեւ երիտասարդները, ուզենք կամ չուզենք, հայախօս չեն: Յօդուածիս մէջ սա կոչած եմ «Սփիւռքի եկեղեցոյ հայաստանացումը»: Ահա թէ ինչու եկեղեցին եւ համայնքը իրարմէ կը հեռանան, փոխանակ զիրար լրացնելու: Պարզապէս իրականութիւն մըն է, որ պէտք է ընդունինք, խօսինք եւ տեսնենք ի՞նչ են լուծումները:

«ՆՅ» – Նորարարութեան համար որքա՞ն պիտե՞ական յատկացում կայ, որովհետեւ Գորարարութիւնը կ'ենթադրէ փոփոխութիւններ, Գոր կառուցներ, Գոր միջավայր: Որքանով այս աշխատանքին մէջ ներգրաւուած անձերը մասնագիտական գետնի վրայ վարձատրութեան արժանի են կամ սիրողական է մասնակցութիւնը: Արդեօք նախատեսուած է որոշ դրամազուլիս մը:

Հ.Զ. – Այսօր առանց մասնագիտական մօտեցումի չենք կրնար շատ առաջ երթալ: Մէկ բան շատ կարեւոր է, այսօր մեր կառուցները դիմագրաւել կարենալու համար պահանջները Սփիւռքի, անպայմանօրէն մարդկային եւ նիւթական ներդրումի պէտք կ'ունենան, այլապէս խօսք է, կը քննարկուի, կը վերլուծուի եւ անկէ անդին չ'անցնիր, որովհետեւ պայմանները չկան: Պէտք է հաստատենք, ընդգծենք որ այսօր որեւէ կազմակերպութիւն եթէ պատրաստ չէ մասնագիտական մարդու՞ եւ նիւթական ներդրում տրամադրելու, կը ձախողի: Ահա թէ ինչու՞ կ'ըսենք հաստատութեանկան, լուծումները պէտք է հաստատութեանկան ըլլան: Արեւմտեան Ամերիկայի պարագային պէտք է ըսեմ որ այսօր համայնքը ունի նիւթական եւ մարդու՞ կարողականութիւն, կը մնայ որ այն ծրագրերը որոնք պիտի գործադրուին, ըլլան համոզիչ, որակաւոր եւ ունենան շատ բարձր մակարդակի չափանիշեր, որ պիտի դարձնէ համոզիչ բարեբարներուն եւ ներդնողներուն: Լուրջ առաջարկ պէտք է ունենաս, բացատրես ի՞նչն է խնդիրը, ինչու՞ համար այս խնդիրը կարեւոր է, ի՞նչ կ'առաջարկուի, որպէսզի այդ խնդիրները լուծուին, պիտի արգարացուի ամէն ինչ եւ կազմուի լաւ մշակուած եւ գործադրելի առաջարկ մը: Եթէ այդ ունենաս, նիւթականը կայ: Կրնամ փորձառութեամբս հաստատել, որ այդ հնարաւորութիւնները կան:

Տեսակցեցաւ՝  
ԺԻՐԱՅՐ ԶՈՒԱՔԵԱՆ

Հարցազրոյցին ամբողջութեան տեսանիւթին համար այցելել . - [https://youtu.be/byuO\\_nsxJ8I](https://youtu.be/byuO_nsxJ8I)

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ  
ԱՄՆ ԱՐԵՎՄՏԵԱՆ ԹԵՄ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴ

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻ  
ԱՐՄԱՏԱՑԱԾ ՀԱՒԱՏՔՈՎ,  
ՆԵՐՇՆՉՈՒԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՄԲ



«Եկեղեցին պարզապէս վայր մը չէ, զոր կ'այցելենք,  
այլ՝ կեանքի ուղի է»  
Յովնան Սրբազան, Առաջնորդ

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ, ՏԵՍԻԼՔԸ, ԱՐԺԷՔՆԵՐԸ

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Ապրէ՛ քրիստոնէական հաւատքդ եւ հայկական մշակոյթդ առօրեայ կեանքին մէջ:

**Մօտ եղի՛ր Աստուծոյ |** Արեւմտեան թեմը պատրաստ է օժանդակելու համայնքներու անդամներուն՝ զօրացնելով կապը Աստուծոյ հետ, ճանչնալով Յիսուս Քրիստոսի ուսմունքը եւ ապրելով Անոր պատգամներով:

**Հաւատարի՛մ եղի՛ր քրիստոնէական աւանդութիւններուն |** Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ուսմունքին եւ պաշտամունքներուն հետեւելով՝ քրիստոնէական հաւատքը կենսունակ եւ իմաստալից պահէ՛ այսօրուան եւ գալիք սերունդներուն համար:

**Ապրէ՛ հայկական արմատներդ եւ ինքնութիւնդ |** Թեմը կը ձգտի մշտապէս կենդանի պահել հայկական մշակոյթը՝ հայոց պատմութեան, լեզուին, մշակոյթին եւ աւանդութիւններուն ծանօթանալու լայն կարելիութիւններ ու միջոցներ ընձեռելով:

**Սորվի՛նք եւ զօրանանք միասին |** Թեմը համայնքի անդամներուն կ'առաջարկէ եկեղեցական ծրագրեր՝ քրիստոնէական հաւատքը խորացնելու եւ հայկական ժառանգութիւնը արժեւորելու համար, միեւնոյն ժամանակ կապ հաստատելով համայնքի միւս անդամներուն հետ:

ՄԵՐ ՏԵՍԻԼՔԸ

Քրիստոնէական հաւատքդ եւ հայ մշակոյթդ դարձո՛ւր կենսակերպ եւ զայն տարածէ՛ առօրեայ կեանքին մէջ:

**Ապրէ՛ հաւատքդ ամէն օր |** Աստուծոյ հետ կապը դարձո՛ւր առօրեայ կեանքի մէկ մասը՝ աղօթքով, Յիսուսի մասին սորվելով եւ եկեղեցական համայնքին մէջ գործուն մասնակցութեամբ:

**Ապրէ՛ մշակոյթդ |** Ապրէ՛ հայկական աւանդութիւններով, պատմութեամբ, լեզուով, արուեստով եւ ընտանեկան սովորութիւններով, կի-

սուէ՛ զանոնք, որպէսզի անոնք կենդանի եւ բովանդակալից մնան քեզի եւ ապագայ սերունդներուն համար:

**Կառուցէ՛ ամուր յարաբերութիւններ |** Ստեղծէ՛ սիրող եւ աջակցող համայնք մը, ուր բոլորը զիրենք գնահատուած կը զգան՝ անկախ ծագումէն կամ հայկական մշակոյթին հետ ունեցած կապէն:

**Օգնէ՛ ուրիշներուն |** Տարածէ՛ սէր եւ բարութիւն՝ արտացոլելով Աստուծոյ սիրոյ պատգամը աշխարհի մէջ:



**Եղի՛ր աւելի մեծ նպատակի մը մասնիկ |** Կապուած մնա քու քրիստոնէական հաւատքիդ եւ մշակոյթիդ, ուր պիտի գտնես հոգեպէս աճելու, արմատներդ արժեւորելու, ինչպէս նաեւ ապագայի համար կենսունակ ու հոգատար համայնք մը կառուցելու միջոցներ:

ՄԵՐ ԱՐԺԷՔՆԵՐԸ

Ապրէ՛ հաւատքդ, ընդունէ՛ մշակոյթդ եւ դրական ազդեցութիւն ունեցիր համայնքիդ մէջ:

**Մասնակցէ՛ պաշտամունքին |** Եկեղեցական արարողութիւնները, ինչպէս՝ մկրտութիւնը, Սուրբ պատարագը եւ այլ խորհուրդներ, միասնաբար հաղորդակցելու, աղօթելու եւ հոգեւորապէս աճելու առիթներ են, որոնք կ'ամրապնդեն հաւատքդ, ինչպէս նաեւ Աստուծոյ եւ եկեղեցւոյ հետ կապը:

**Սորվէ՛ եւ աճէ՛ |** Կրթութիւնը կեանքի շարունակական ճանապարհ մըն է: Եկեղեցին կ'օգնէ հասկնալու հաւատքդ, մշակելու բարձր արժէքներ եւ կապուած մնալու հայկական աւանդութիւններուն ու հաւաքական իմաստութեան:

**Օգնէ՛ ուրիշներուն |** Ինչպէս Յիսուս ուսուցանեց, դուն նոյնպէս կանչուած ես ծառայելու ուրիշներուն: Եկեղեցին կ'ընձեռէ կամաւոր ծառայութեան առիթներ՝ կարիքաւորներուն եւ համայնքի անդամներուն ձեռք երկարելու համար:

**Ապրէ՛ մշակոյթդ |** Կենսունակ պահելով հայկական ընտանիքն ու մշակութային աւանդութիւնները՝ դուն կ'ունենաս հայկական ինքնութեան պատկանելիութեան եւ հպարտութեան աւելի՛ խոր զգացում, միեւնոյն ժամանակ կ'ապահովես այս ժառանգութեան շարունակականութիւնը:

**Հնարէ՛ խելամտօրէն, գործէ՛ սրտցաւ |** Եկեղեցին կ'ապահովէ, որ իր միջոցները օգտագործուին հոգածութեամբ ու խելամիտ կերպով՝ իր ծրագրերուն նպաստելու եւ համայնքը զարգացնելու համար:

**Հրաւիրէ՛ եւ ներշնչէ՛ |** Եկեղեցին կը հասնի անոնց, որոնք հաւատք եւ նպատակ կը փնտռեն: Եկեղեցին յոյս կու տայ եւ իր դռները կը բանայ ամէնուն դիմաց՝ Աստուծոյ հետ աւելի սերտ կապեր հաստատելու համար: ■

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ԱՄՆ Արեւմտեան Թեմ  
Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տերտերեան, Առաջնորդ  
3325 N. Glenoaks Blvd, Burbank, CA 91504  
Յեռ. 818-558-7474 | Ել-նամակ: info@wdacna.com